ԿԱՐԾԻՔ

ԱՐՓԻՆԵ ՄԵԽԱԿԻ ԿՅՈՒՐԵՂՅԱՆԻ «ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ Ը.00.02 - «ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՆՐԱ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ատենախոսության թեմայի արդիականությունը:

Ժամանակակից համաշխարհային տնտեսությունը բնութագրելիս առավել հաճախ օգտագործվում են այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են աշխատանքի հասարակական և միջազգային բաժանում, գլոբալացում ու միջազգայնացում, ռեսուրսների սահմանափակություն, աճող պահանջմունքներ, երկրների միջև տնտեսական սահմանների բացակայություն, ռեսուրսների ազատ տեղաշարժ և այլն:

Մյուս կողմից, յուրաքանչյուր պետության կարևորագույն խնդիրներից մեկը տնտեսության շարունակական և երկարաժամկետ զարգացում ապահովելն է: Դրան հասնելու համար անհրաժեշտ է ստեղծել որոշակի միջավայր, որտեղ կպահպանվեն շուկայական տնտեսության կանոնները, յուրաքանչյուր սուբյեկտ կկարողանա այդ պայմաններում ձևավորել որոշակի մրցակցային առավելություններ ու իրացնել դրանք: Սա նշանակում է, որ գլոբալ մրցակցության պայմաններում յուրաքանչյուր պետություն ձևավորում է որոշակի մրցակցային առավելություններ, եթե կարողանում է ստեղծել տնտեսական գործունեություն ծավալելու համար բարենպաստ միջավայր:

Իրականում սա բավականին պարզ խնդիր է, որի լուծումը, սակայն, շատ բարդ է: Մի կողմից անհրաժեշտ է բարենպաստ պայմաններ ստեղծել բիզնեսի համար՝ ցածր հարկեր, ազատ մրցակցություն..., մյուս կողմից անհրաժեշտ է համալրել բյուջեն, կատարել պետական ծախսեր և այլն: Գտնել օպտիմալ կետը, որտեղ կհամընկնեն բիզնեսի ու պետության շահերը բավականին դժվար է և չկա որևէ «դեղատոմս», որևէ պետական քաղաքականություն, որն արդյունավետ կաշխատի բոլոր երկրներում ու բոլոր պայմաններում:

Այդ իսկ պատճառով Ա.Կյուրեղյանի կողմից ներկայացված ատենախոսության թեման արդիական է ու տևական ժամանակ կմնա այդպիսին, քանի որ բիզնես

միջավայրի վրա ազդող գործոններն այնքան շատ են ու բազմազան, որ անհնար է դրանք բոլորը հաշվի առնել ու գնահատել, իսկ դրանցից յուրաքանչյուրը ժամանակի ինչ-որ պահի կարող է դառնալ ամենակարևոր գործոն ու ազդել ողջ տնտեսական զարգացման ընթացքի վրա:

Ատենախոսության նպատակը և խնդիրները:

Ատենախոսության հիմնական նպատակը ՀՀ գործարար միջավայրի կառավարման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների բացահայտումն է:

Առաջադրված նպատակն իրագործելու համար կարևորվել են մի շարք խնդիրներ, որոնց արդյունքում անհրաժեշտ է. ուսումնասիրել գործարար միջավայրի կառուցվածքն ու այն բնութագրող տարրերը, իրականացնել գործարար միջավայրի զարգացմանը նպաստող գործոնների վերաբերյալ գործոնային վերլուծություն, ուսումնասիրել գործարար միջավայրի զարգացմանը նպաստող գործոնները արտերկրում և բացահայտել ՀՀ-ում դրանց տեղայնացման հնարավորությունները, համակարգել ՀՀ սոցիալ-տնտեսական գործընթացներում բարեփոխումները, մշակել տնտեսական զարգացման առաջնահերթությունների գնահատման մեխանիզմներ ու համակարգել տնտեսության զարգացման և գործարար միջավայրի բարելավման գերակայությունները:

Աշխատանքի հիմնական խնդիրներից է ոչ թե ուղղակի ցույց տալ գործարար միջավայրի բարելավմանը նպաստող գործոնները, այլ այդ գործոնների համակարգման միջոցով ցույց տալ, թե դրանք ինչ ազդեցություն են ունենում կամ ունենալու բնակչության սոցիալ–տնտեսական զարգացման, կենսամակարդակի բարձրացման, պետության խնդիրների լուծման վրա:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Ատենախոսությունը կազմված է ներածական մասից, երեք գլուխներից, եզրակացություններից և գրականության ցանկից, ինչպես նաև ատենախոսության հիմնական տեքստում տեղ չգտած, սակայն ատենախոսության համար կատարված հաշվարկներից ու վերլուծություններից կազմված հավելվածից:

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, հետազոտության նպատակն ու խնդիրները, օբյեկտն ու առարկան, տեսամեթոդական ու տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթն ու արդյունքների գիտագործնական

նշանակությունը:

Ատենախոսության առաջին գլխում ներկայացված է գործարար միջավայրի դերը տնտեսության զարգացման գործում, որի շրջանակներում անդրադարձ է կատարվել գործարար միջավայրի կառուցվածքին ու բնութագրող տարրերին, կատարվել է գործարար միջավայրի զարգացմանը նպաստող գործոնային վերլուծություն և ներկայացվել ՀՀ-ում դրա տեղայնացման հնարավորությունները:

Երկրորդ գլխում ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման համատեքստում գործարար միջավայրի արդյունավետ կառավարման մեխանիզմների գնահատման մոտեցումների բացահայտման համատեքստում անդրադարձ է կատարվել ՀՀ-ում գործարար միջավայրի կառավարման արդյունավետության բարձրացման մեխանիզմներին և ՀՀ սոցիալ-տնտեսական գործընթացներում ինստիտուցիոնալ բարեփոխումներին:

Ատենախոսության երրորդ գլխում Հայաստանում գործարար միջավայրի բարելավման ու տնտեսական առաջնահերթությունների զարգացման գերակայությունների համատեքստում ներկայացվել են տնտեսական զարգացման առաջնահերթությունների գնահատման մեխանիզմները, այդ առաջնահերթությունների համակարգման մեխանիզմներն ու տնտեսական զարգացման և գործարար միջավայրի բարելավման գերակայությունները:

Կատարված վերլուծությունների հիմքով արվել են եզրակացություններ ու բխեցվել որոշակի առաջարկություններ:

Հետազոտության գիտական նորույթը:

Հետազոտության ընթացքում ստացվել են որոշակի արդյունքներ, որոնցից հեղինակի կողմից որպես գիտական նորույթ առանձնացվել են դրույթներ, համաձայն որոնց.

- Բացահայտվել են գործարար միջավայրի զարգացմանը խոչընդոտող գործոններն ու տնտեսության իրական հատվածում առկա ռիսկերը՝ առաջարկելով դրանց նվազեցմանն ուղղված ենթակառուցվածքային բարեփոխումներ,
- Գնահատվել է պարենամթերքի արտահանման և հարկային բեռի ազդեցությունը ՀՆԱ-ի վրա՝ ուրվագծելով պետություն-բիզնես-քաղաքացիական հասարակություն համագործակցության շրջանակների ընդլայնման մոտեցումները,

- ՀՀ զբաղվածության մակարդակը բարձրացնելու նպատակով առաջարկվել են առավել բարձր արժեք ստեղծող ոլորտներում (ըստ հեղինակի՝ գյուղատնտեսության, հագուստի արտադրության) գործարար ակտիվության խթանում և այդ ոլորտներում ներմուծման փոխարինման քաղաքականության իրականացման մեխանիզմներ:

Ատենախոսության արդյունքների գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության հիմնական արդյունքներն ունեն որոշակի գիտական ու գործնական նշանակություն և կարող են օգտակար լինել բիզնես միջավայրի սուբյեկտների ու այդ միջավայրի բարելավման համար շահագրգիռ մարմինների, հիմնախնդրով զբաղվող հետազոտողների ու լայն շրջանակների համար:

Դիտողություններ աշխատանքի վերաբերյալ:

Իր դրական հատկանիշներով հանդերձ՝ ատենախոսությունում տեղ են գտել նաև որոշակի թերացումներ, որոնցից կարելի է նշել հետևյալները.

- Ատենախոսության մեջ բիզնես միջավայրի վերլուծության համար օգտագործվել են Համաշխարհային բանկի Doing business-ի զեկույցները: Չթերագնահատելով կատարվածը, կարծում ենք աշխատանքն ավելի կշահեր, եթե դրանում անդրադարձ լիներ նաև Համաշխարհային տնտեսական ֆորումի «Գլոբալ մրցունակության զեկույցին», որտեղ 12 հենասյուներում (pillar) յուրաքանչյուրում 5-12 գործոնների միջոցով ցույց է տրվում, թե տնտեսությունն ինչ դիրք է գրավում գլոբալ մրցակցության մեջ և ըստ այդ գործոնների ևս կատարվում է ռանգավորում: Այս զեկույցները կարևորում ենք, քանի որ ատենախոսության մեջ կատարվել է նաև գործոնային վերլուծություն, իսկ ավելի մեծ թվով գործոնների դիտարկումը առավել ամբողջական պատկերացում կապահովեր և կճշգրտեր Doing business-ի հիմքով գործոնային վերլուծության արդյունքները:
- Ատենախոսության 2-րդ գլխի վերջում վերլուծությունների հիման վրա հեղինակը եզրակացություններ է կատարում և 3 կետերով կատարում առաջարկություններ, որոնք լրացուցիչ հիմնավորման կարիք ունեն: Մասնավորապես, կետերից մեկով նշվում է, որ «Առևտրային բանկերը վարկավորում իրականացնեն հատկապես այն ոլորտներում, որոնց համախառն ավելացված արժեքը բարձր է...էական նշանակություն ունի վարկավորման տոկոսադրույքի սահմանումը, հատկապես վերջին-

ներիս նվազեցումը կբերի սոցիալական խնդիրների լուծման...»: Նկատենք, որ վարկեր տրամադրող բոլոր կառույցները և առևտրային բանկերը ևս բիզնեսի տեսակ են և առաջնորդվում են սեփական շահույթի ստացման հնարավորությունների իրացմամբ և հասկանալի չէ, թե ինչպես պետք է ստիպել բանկերին առավել ռիսկային գործառնություններ իրականացնել, կամ ցածր տոկոսադրույքներով վարկավորել:

- Ատենախոսության շրջանակներում կատարված վերլուծությունների արդյունքում առաջարկվում է (նաև որպես գիտական նորույթ է առաջ քաշվում) առավել բարձր ավելացված արժեք ստեղծող ոլորտներում (գյուղատնտեսություն, պարենի արտադրություն, հագուստի արտադրություն) գործարար ակտիվության խթանման ու ներմուծման փոխարինման քաղաքականություն վարել: Սակայն ՀՀ կառավարության կողմից առաջնային զարգացման ու համեմատական առավելություն ունեցող ուղղություններ են համարվում զբոսաշրջությունը, տեղեկատվական տեխնոլոգիաները: Ընդունելով հանդերձ հեղինակի առաջարկած ուղղություններում աշխատանքների կատարման անհրաժեշտությունը, կարծում ենք, ավելի ճիշտ կլիներ համեմատականներ տանել Կառավարության կողմից գերակա ճանաչված ուղղությունների և Հայաստանում հանքարդյունաբերությունից հետո առաջատար դիրք ունեցող ծառայությունների ոլորտի հետ և եզրակացություններ կատարել հենց այդ հիմքով:
- Արտահանման խրախուսման տեսանկյունից գործոնային գնահատման արդյունքում անդրադարձ կատարվել է ազգային արժույթի փոխարժեքին, սակայն դիտարկվել են միայն փոխարժեքի փոփոխականության տեսանկյունից: Այնինչ ԿԲ դրամավարկային քաղաքականությունը և փոխարժեքի՝ որոշակի լծակներով կառավարումը առավել մեծ ազդեցություն ունեն արտահանման-ներմուծման քաղաքականության վրա, քանի որ Հայաստանում արտադրված ապրանքը երբեմն անգամներով ավելի թանկ է ստացվում ներմուծվող ապրանքներից և տնտեսապես նպատակահարմար չէ նման գործունեություն իրականացնելը: Կարծում ենք, այս խնդրին անհրաժեշտ էր առավել զգույշ անդրադառնալ և համակողմանի վերլուծել:

Եզրակացություն

Վերը նշված դիտողությունները, ըստ էության, արտահայտում են միայն աշխատանքը առավել ամբողջական ու ամփոփ դարձնելու ցանկություն և չեն

նվազեցնում աշխատանքի գիտական արժեքը:

Ա.Մ.Կյուրեղյանի կողմից ներկայացված ատենախոսությունն ունի կարևոր գիտագործնական նշանակություն, մշակված մոտեցումներն ու առաջարկությունները հանդիսանում են նորույթ տվյալ բնագավառում և կարող են արդյունավետ օգտագործվել գործարար միջավայրի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների գնահատման ու կարգավորման աշխատանքներում:

Ատենախոսությունն իր կառուցվածքով, առաջադրված խնդիրներով ու դրանց լուծումներով, կատարված հաշվարկներով, ինչպես նաև տրամաբանական շարադրման ոճով հանդիսանում է պատշաճ մակարդակով կատարված ավարտուն գիտական հետազոտություն:

Ընդհանուր առմամբ, Արփինե Մեխանի Կյուրեղյանի ներկայացրած «Գործարար միջավայրի կառավարման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով» թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.02-«Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

15.06.2020թ.

Պաշտոնական ընդդիմախոս,
տնտեսագիտության թեկնածու՝ **Կ.Հ.Առաքելյան**

Կ.Հ.Առաքելյանի
ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՊՏՀ գիտական քարտուղար **Ն.Հ.Դարբինյան**